Հայտարարություն կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ

Երևան, 9 դեկտեմբերի 2019թ.

2019 թվականի սկիզբը նշանավորվեց հավասար, մրցակցային և ազատ ընտրությունների միջոցով ձևավորված խորհրդարանի աշխատանքների մեկնարկով և գործադիրի կազմավորմամբ, որի հետագա գործունեությունը հաստատեց կոռուպցիայի դեմ պայքարում հստակ քաղաքական կամքի առկայությունը:

2019 թվականի երկրորդ կեսին արձանագրվեց հակակոռուպցիոն քաղաքականության առաջ մղման որոշակի գործընթաց, որը ձևավորեց անհրաժեշտ իրավական ու ինստիտուցիոնալ համակարգի հիմքերը: Մասնավորապես.

- հունիսի 24-ին ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց հակակոռուպցիոն քաղաքականության խորհուրդը, որը նախատեսված է ծառայելու որպես կոռուպցիայի դեմ պայքարի համակարգման ու քննարկումների հիմնական հարթակ.
- հոկտեմբերի 3-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց 2019-2023 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը, որով ուրվագծվեց ընդհանուր հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ համակարգը և առաջարկվեցին բավականին հավակնոտ գործողություններ.
- հոկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից հաստատվեց դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը, որով նախատեսվում են արմատական փոփոխություններ՝ միտված հակակոռուպցիոն պայքարի համար վճռորոշ դերակատարում ունեցող ինստիտուտների՝ դատարանների, դատախազական ու քննչական մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև անցումային արդարադատության իրականացմանն ուղղված գործուն քայլեր.
- նոյեմբերի 19-ին Ազգային ժողովի կողմից ձևավորվեց և սկսեց գործել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, որի ընդլայնված գործառույթների արդյունավետ իրականացման պարագայում կարող է էականորեն կանխարգելվել կոռուպցիան.

2019թ. ընթացքում մշակվեցին մի շարք իրավական ակտերի նախագծեր («Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին», «Կուսակցությունների մասին», ««Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և այլ), որոնք նախատեսում են կոռուպցիայի դեմ պայքարի համար բարենպաստ իրավական միջավայրի ձևավորում:

Տարվա ընթացքում իրավապահ մարմինները շարունակեցին կոռուպցիոն հանցագործությունների բացահայտմանն ուղղված ակտիվ գործողությունները, որոնք սկսել էին 2018 թվականի հեղափոխությունից հետո: Հարկ է նկատել, որ այս ընթացքում եղել են ինչպես նախկին վարչակարգի, այնպես էլ ներկա իշխանությունների բարձրաստիճան պաշտոնյաների կոռուպցիոն գործարքների հետ կապված աղմկահարույց բացահայտումներ:

Հիմնվելով տարվա ընթացքում առկա տարբեր հրապարակումների վրա՝ կարելի է պնդել, որ կոռուպցիան Հայաստանում դադարել է համակարգային լինելուց, կամ, առնվազն, զգալիորեն թուլացած են այն գործոնները, որոնք այդ երևույթին տալիս են համակարգային բնույթ: Էապես նվազել են մենաշնորհների և օլիգոպոլիաների գերիշխանության վարչական և քաղաքական

լծակները, կրճատվել է ստվերը, աճել է համախառն ներքին արդյունքը: Չկան լուրջ և արժանահավատ փաստեր, որոնք կվկայեն խոշոր գործարարների հետ քաղաքական իշխող վերնախավի սերտաճման մասին: Չկան հրապարակումներ, որոնք կմատնանշեին պետական կառավարման համակարգում կոռուպցիոն բուրգի առկայության կամ գործարարների նկատմամբ համատարած և համակարգված հարկային շորթումների մասին:

Միևնույն ժամանակ, դեռևս վաղ է պնդել, որ կոռուպցիան Հայաստանում դադարել է լինել լուրջ մարտահրավեր և, առավել ևս, երկրի զարգացման վրա վճռորոշ բացասական ազդեցություն ունեցող գործոն: Մտահոգիչ է այն, որ հեղափոխությանը հաջորդող առաջին իսկ տարում զգալի թիվ են կազմում կոռուպցիոն հանցագործությունների մասին ՁԼՄ-երի հրապարակումները և իրավապահ մարմինների պաշտոնական հաղորդագրությունները, ինչը հավաստում է, որ որոշակիորեն շարունակում են գործել նախկին կոռուպցիոն սխեմաները և արատավոր գործելաոճը: Իրավիճակը վտանգավոր է այն առումով, որ պարարտ հող է ապահովում համակարգային կոռուպցիայի վերադարձի համար, իսկ հասարակության մտածողության ու վարքագծի փոփոխությունը՝ դիմակայելու տվյալ արատին, երկար ժամանակ է պահանջում: Կոռուպցիոն առանձին սխեմաների գործողությունը կարող է լրջորեն խաթարել վերը նշված հակակոռուպցիոն նորաստեղծ ու ստեղծվելիք կառույցների աշխատանքը և հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման արդյունավետությունը:

Ի լրումն սրա, ցավոք, նկատվում են իներցիայով շարունակվող կամ ներկա իրավիճակում նորովի դրսևորվող որոշ երևույթներ, որոնք վտանգի տակ են դնում կառավարության հակակոռուպցիոն պայքարի հավակնությունները և տեղիք տալիս նոր կասկածների ու հիասթափությունների

Մասնավորապես, մտահոգիչ են պետական ու համայնքային ղեկավարության ոչ թափանցիկ և ոչ հաշվետու գործելակերպի դրվագները, երբ հանրությունից գաղտնի են պահվել պարգևավճարների հետ կապված որոշումները՝ ՀՀ Ազգային ժողովի և կառավարության պարագայում, կամ գործարարների հետ ունեցած պայմանավորվածությունները և ստացված գույքը՝ Երևանի քաղաքապետարանի պարագայում:

Անհանգստացնող են հանրային գնումների գործընթացներում մեկ անձից գնումների ծավալների աճը և այնպիսի մատակարարների ընտրությունը, որոնց սեփականատերերն, ըստ լրատվամիջոցների, կապված են ներկա իշխանությունների բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Առհասարակ, խիստ խնդրահարույց են շահերի բախման շարունակական ու թարմ դրսևորումները, դրանց անտեսումը և/կամ կասկածելի հովանավորչությունը: Կոռուպցիայի կանխարգելման հիմնական գործիքը շահերի բախման կանխումը և/կամ կառավարումն է, ուստի տվյալ երևույթի նկատմամբ դրսևորած հանդուրժողական վերաբերմունքը ստեղծում է հիմքեր կոռուպցիոն գործարքների համար և խոցելի դարձնում կառավարման նոր մշակույթի ներդնումը:

Հակակոռուպցիոն պայքարի արդյունավետության գործում առանցքային գործոն է բարեփոխումների և ստանձնած հանձնառությունների իրականացման տեմպը: Հապաղումների արդյունքում ակնհայտ կերպով ուժգնանում է կոռումպացված խմբերի դիմադրությունն ու դիմադրողականությունը և վտանգում հեղափոխության հակակոռուպցիոն ու ժողովրդավարական օրակարգը:

Ներկա իրավիճակում կարևորագույն նշանակություն են ձեռք բերում բոլոր մարմիններում, բայց առավելապես դատական և իրավապահ մարմիններում նախատեսվող արմատական բարեփոխումները, որոնք միտված են պաշտոնյաների բարեվարքության ապահովմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ու հանրային վստահության բարձրացմանը: Այս համատեքստում ընկալելի չեն Սահմանադրական դատարանի ճգնաժամի հանգուցալուծման ձգձգումները, և տարիներ շարունակ կեղծված ընտրությունները վավերացնող դատարանի անդամների շարունակվող պաշտոնավարումը:

Վճռորոշ նշանակություն ունի հեղափոխության արժեքներին դավանող, գիտակ, գաղափարական, կառավարման հմտություններ և համարձակություն ունեցող ու փոփոխություններ նախաձեռնող ղեկավար կադրերի ընտրությունը և, որ կարևոր է, նրանց պահպանումը կառավարման համակարգում: Առկա համակարգերը բավականին արատավոր են, և նոր, նույնիսկ գաղափարական կադրերը կարող են կլանվել կամ հարմարվել դրանց, իսկ չհարմարվողները՝ անարդարացիորեն դուրս մղվել:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով Հայաստանի Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանությունների կողմից վարվող հակակոռուպցիոն քաղաքականությունը՝ հույս ենք հայտնում, որ ջանքերը չեն սահմանափակվի միայն նախատեսված ռազմավարություններն ու միջոցառումներն իրականացնելով, այլև կձգտեն էապես փոխել կառավարման և քաղաքական մշակույթը բոլոր ոլորտներում: Հեղափոխությունն առաջնորդած քաղաքական ուժից ակնկալվում են հեղափոխական լուծումներ: Փոփոխությունները պետք է լինեն ամենուրեք, հիմնավոր և անհապաղ: